



38. ՈՆՆԵՐԸ ԿՏՐԱԾ ԿՆԻԳԸ

Ըլնում են, չեն ըլնում քիր ու ախպեր են ըլնում: Սրանք իրար ընկնց սիրելիս են ըլնում, որ մի օր իրար շտենային, էն օրը իրանց համար սև էր: Համա ախսոր կնդանը էս բանը դիր շի գալի- միար ա անում, որ մի մհանա բթնի, բալի կարենա քիր ու ախպեր իրարից բաժանի:

Մարդ սւ կնիդ մի սիրուն, նախշուն էրեխա ունեին. կնիգը մի բշեր իրա էրեխուն մորթում ա ու արնոտ դանադը տանում դնում տալի ջերբ:

Առավոտը որ լիսանում ա, մարդը վեր ա կենում, տենում իրանց էրեխեն մորթած. մնում ա դարմացած, թե էս ով պտի մորթած: Շատ դես-դեն հարց ու փորձ ա անում, չի իմանում, վերջը կսիդը նրան թաքուն ասում ա.

— Բալի քիրդ ա արև. մի նրա ջերն էլ տես, թե նա սպանած ըլնի, հո նրա դանադը արնոտ կըլնի, մալում կանի, թե չէ՝ հո չէ:

Էս հավատալու բան ա. ախսերը քվորը, որ էնքամ սիրում էր, բուկի էսթավուր մտքով էլ ա կանցկացնե՞ր, թե նա իրա էրեխին կսպանի: Համա կնիդը որ շատ ղոռեց, նրա բեխն էլ ընդավ, գնաց քվոր ջերբը ման էկավ, տեհավ, ըհը՛, ջերումը մի արնոտ դանագ, տուկց. «Բալի, որ սա սպանած կըլնի»:

Էլ առանց հարցնելու, նոքարտանցը հրամայում ա, որ քվոր

ոնները կիսից հետը կտրեն ու տանեն քցեն մի մեշա, ընտե ջանա-
վարների փայ ըլնի: Նոքարտինքն էլ ինչ կարան անի, աղի հրա-
ման էր, կարալի՞ն նրա հրամանից դուս գա՛ քվոր ոնները կտրում
են, տանում քցում մեշեն:

Մի օր, մի քանի նաղրներ էս մեշի միջովը անց ին կենում. մի
կնգա ձեն անգաջներն ընգավ, ասեցին.

— էթանք տենանք ի՞նչ ձեն ա:

Գնացին ի՞նչ տենան՝ մի հուրի-փարի աղջիկ ոնները կտրած
ընտե վեր ընգած ա. հարցրին, թե ով ա նրան ըստե քցե, նա բի-
րագի նոր նաղլ արեց, ոնց որ ես ձեզ նաղլ արի: էս նաղրներից
մինը ուզում ա էս կնգանը վրա պսակվի, մեկել վեզրները չեն
թողնում. սա նրանց անգաջ չի դնում, էս կնգանը վեր ա ունում
հետները տանում իրանց երգիրը, ըստե նրա վրա հարսանիք ըլ-
նում, շինում իրա կնիգը:

Մի հետ, էս վեզիրը վեկացավ գնաց ուրիշ երգիր: Մի քանի
վախտ անց ա կենում, էն շուախ կնիգը մի տղա, մի աղջիկ ա բե-
րում՝ տղի քաքուլը ոսկի, աղջկա՝ ճկիթը: Վեզրի նոքարտինքը մի
մարդի ձեռով գիր են դրգում իրանց աղի կուշտը, իմաց տալի, որ
նրա կնիգը ըսենց էրեխեք ա բերե. կնքե՞ն, թե կենան ընշանք
ինքր գա:

էս գիր տանող մարդը գալիս ա, դալիս, էն շուախ կնգա ախ-
պոր տանը քշերը վե գալի, որ առավոտը վե կենա իրա ճամփեն
էթա: էս շուախ կնգա ախպերակինը գիր տանողից, որ իմանում ա
թե բանը ընշումն ա, միտք ա անում բալի մի ֆանտով կարենա
էս գիրը ձեռ քցի՝ տենա մեշը ի՞նչ ա գրած: Գիր բերողը որ քնում
ա, էթում ա ուսուլով գիրը ջերից հանում, կարդում, տենում ա
գրած ա թե. «Բեզրգյանն աբրած կենա, կնիգդ մի տղա, մի աղջիկ
ա բերե, աչքդ լիս. մնի քաքուլն ա ոսկի, մեկելինը՝ ճկուտը, ի՞նչ
անենք, կնքե՞նք թե կենանք ընշանք գաս»:

էս սհաթը էս գիրը ճղում ա, թազա դիր գրում, թե՛ «կնիգդ
էրկու շան թուլա ա բերե, ինչ անենք, դե՞ն քցենք, թե պահենք,
գաս»:

էլետ դնում նրա ջերը՝:

1 Զեռագիրն այստեղ ընդհատվում է: